ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

«ԳՄՄՀ-ԳՀԽԾՁԲ-26/05» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Մարտունի **11.05.2024թ.**

ժ. / 09:00

Նիստին մասնակցել են հանձնաժողովի նախագահ՝ Ա. Քոչարյանը,անդամներ՝ Ս. Աբրոյանը, Վ.Թամոյանը, Կ. Դավթյանը, Թ. Դավթյանը, քարտուղար ՝ Կ. Սիմոնյանը

1. **ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հանձնաժողովը որոշեց հաստատել նիստի հետևյալ օրակարգը

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Ընթացակարգի ներկայացված հայտերում կատարված շտկումների մասին:
3. Ընթացակարգի ընտրված մասնակիցներ հայտարարելու, պայմանագիր կնքելու որոշման , և անգործության ժամկետ հայտարարելու մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ՝ 0

2. «ԳՄՄՀ-ԳՀԽԾՁԲ-26/05» ծածկագրով գնման ընթացակարգի ներկայացված հայտերում կատարված շտկումների մասին:

2.1 Հրավերի սահմանված կարգի պահանջներին համապատասխան մասնակիցներ **«Քաղշիննախագիծ» ՍՊԸ-ի** հայտում արձանագրվել էին հրավերի սահմանված կարգի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ուստի հանձնաժողովը կասեցրել էր նիստը և հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում էր ուղարկել մասնակիցներին ՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

2.2 Հանձնաժողովը ուսումնասիրեց **«Քաղշիննախագիծ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացրած շտկումները :

2.3 Մասնակցի կողմից մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկվել են բոլոր անհամապատասխանությունները: Ուստի գնահատող հանձնաժողովի կողմից նշված կազմակերպությունների հայտը գնահատվել է բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ՝ 0

3. Ընտրված մասնակիցների և պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու և անգործության ժամկետ սահմանելու մասին

3.1 «**ԳՄՄՀ-ԳՀԽԾՁԲ-26/05**» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվել **«Քաղշիննախագիծ» ՍՊԸ -Ն**, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ՝ 0

3.3 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և անգործության ժամկետ սահմանելէ 10 օրացուցային օր՝ ըստ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի: Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրը ընտրված մասնակցներին ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ՝ 0

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները.

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Ա. Քոչարյան

Անդամներ՝ _____ Ս. Աբրոյան

_____ Վ. Թամոյան

_____ Կ. Դավթյան

_____ Թ. Դավթյան

Քարտուղար՝ _____ Կարեն Սիմոնյան